



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

15.10.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/131

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16539-18 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 07.09.2018թ. թիվ 01/10-205 գրության հիման վրա, 13.09.2018թ. «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 07.09.2018թ. թիվ 01/10-205 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Կատարելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջները, հայտնում ենք, որ ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանն ի պատասխան տրված եզրակացության համաձայն, գնման ընթացակարգի մասնակից «Վիոլա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Հարություն Օհանյանը:

3. «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վիոլա» ՍՊԸ-ն 25.09.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 30.07.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ առաջին տեղ զբաղեցրած

մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Վիոլա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 30.07.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 716,368 ՀՀ դրամ:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Վիոլա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ՝ 716,368 ՀՀ դրամ գումարի չափով:

Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 44-րդ և 45-րդ կետերի դրույթներով՝ որոշեց, հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել ծանուցել «Վիոլա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ինքնուրույն կամ Կոմիտեի միջոցով ներկայացնել՝ Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունից տարբերվող այլ լրացուցիչ տեղեկատվություն, որում կհերքվի «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հանգամանքը:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 31.08.2018թ. արված քաղվածքի համաձայն՝ 30.07.2018թ. դրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության համաձայն՝ կազմում է՝ 716.368 ՀՀ դրամ պարտավորություն՝ ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով, որտեղ 710.969 ՀՀ դրամը՝ հարկի չափն է, իսկ 5399 ՀՀ դրամը՝ տույժը:

Տեղեկացնում ենք, որ «Վիոլա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 716.368 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունները առաջացել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների և էլեկտրոնային համակարգի թերի աշխատանքի արդյունքում, մասնավորապես.

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 17.07.2018թ. էլեկտրոնային եղանակով հարկային տեսչությանն է ներկայացվել ներմուծման հայտարարագիր (Ե71Ղ8170718003266), որում ՌԴ-ի («Финмед») կազմակերպությունից ներմուծված ապրանքների համար հաշվարկվել է ԱԱՀ հարկման բազա՝ 2.031.908 ՀՀ դրամի և ԱԱՀ 460.381 ՀՀ դրամի չափով (ապրանքի ներմուծման ամսաթիվն է՝ 13.07.2018թ.):

Հաջորդ օրը՝ 18.07.2018թ., ընկերության կողմից նշված գործարքի մասով նորից է ներկայացվել հայտարարագիր (Ե71Ղ8180718003319)՝ ուղղված տարբերակով (ԱԱՀ՝ 335.068 ՀՀ դրամ):

Վերոհիշյալ երկու հայտարարագրերում կցված փաստաթղթերը բացարձակապես նույնն են (հաշվի-ապրանքնագիր՝ 12022, ամսագրված՝ 15.06.2018թ.):

ՀՏ-ում հարկային պարտավորությունների անձնական հաշվառման քարտում որպես ԱԱՀ-ի գծով պարտավորությունն են գրառել և 460 381 ՀՀ դրամը և 335068 ՀՀ դրամը, որի մեջ ներառվել է նաև ժամկետանց օրերի տույժի գումարը:

Մինչդեռ, ՀՀ հարկային օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2. Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ներկայացված մեկից ավելի հարկային հաշվարկներից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հարկային հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հարկային հաշվարկ: Արտահանման կամ ներմուծման տվյալ գործառնության մասով ներկայացված մեկից ավելի ներմուծման հարկային հայտարարագրերից կամ արտահանման հարկային հայտարարագրերից առաջինը համարվում է տվյալ գործառնության համար ներկայացված հայտարարագիր, իսկ մյուսները՝ ճշտված հայտարարագիր:

Այսպիսով, «Վիոլա» ՍՊԸ-ին վերագրվել է երկու հայտարարագրերով՝ թե հարկային հաշվարկով, և թե ճշտված հայտարարագրով ներկայացված գումարները, մինչդեռ ՀՀ

հարկային օրենքգրի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ընկերության վրա պետք է դրվեր միայն ճշտված հայտարարով ներկայացված գումարի մասով պարտավորություն:

Միևնույն ժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել միայն հետևյալ փաստաթղթերը՝ ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը...:

ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

Վերոհիշյալից բխում է, որ վկայակոչված ներմուծման հայտարարագրերի հիման վրա առաջացած ներմուծման մասով ԱԱՀ համար վճարման վերջնաժամկետ է հանդիսանում ՀՀ տարածք ապրանքը ներմուծելու (13.07.2018թ.) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ այսինքն 2018թ. օգոստոսի 20-ը ներառյալ:

Մինչդեռ, ինչպես նշվել է, վկայակոչված ներմուծման հայտարարագրերի հիման վրա առաջացած ներմուծման մասով ԱԱՀ-ն արդեն իսկ 30.07.2018թ., փաստորեն, դիտարկվել է որպես ժամկետանց պարտավորություն, սակայն դրա համար վճարման վերջնաժամկետ է հանդիսանում ՀՀ տարածք ապրանքը ներմուծելու (13.07.2018թ.) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ այսինքն 2018թ. օգոստոսի 20-ը:

Գտնում ենք, որ վերոհիշյալը պայմանավորված է Ընկերության ներկայացրած հաշվետվությունների և կատարած վճարումների մասին տեղեկատվությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների կողմից հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ սխալ ներմուծելու, ինչպես նաև այդ համակարգի ոչ լիարժեք լինելու պատճառով: Հիմնախնդիրը կայանում է նրանում, որ հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները, հաշվետվությունները կամ հայտարարագրերը հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ մուտքագրելու օրվա դրությամբ համակարգում ֆիքսվում են հարկային պարտավորություններ՝ առանց տարանջատելու դրանց ժամկետանց լինելու հանգամանքը:

Այսպես, օրինակ, «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 17.07.2018թ. ներկայացված ԵՏՄ-ից ներմուծման հայտարարագրի հիման վրա՝ նույն օրը էլեկտրոնային համակարգում փաստվել է հարկային պարտավորություն, այն դեպքում, երբ դրա վճարման ժամկետը սահմանված է ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, այսինքն, տվյալ դեպքում 20.08.2018թ. (Հարկային օրենսգիրք, 78-րդ հոդված, 6-րդ մաս): Այն, որ հարկային մարմինը հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ փաստում է հարկային պարտավորությունը, հասկանալի է, սակայն այն հանգամանքը, որ այդ փաստը ներկայացնում է երրորդ անձանց որպես ժամկետանց հարկային պարտավորություն, կարծում ենք՝ համակարգային թերություն է:

Վերոհիշյալի հետ կապված «Վիոլա» ՍՊԸ-ն 03.09.2018թ. և 24.09.2018թ. դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային պարտավորություններում վերահաշվարկ կատարելու խնդրանքով, սակայն նշված վերահաշվարկը կատարվել է 03.09.2018թ. դրությամբ, այլ ոչ թե Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ: Միակը, ինչ ուղղվել է, դա այն է, որ ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով 716.368 ՀՀ դրամ պարտավորության գումարից հանվել է 5399 ՀՀ դրամ՝ տույժը, և պարտքը դարձել է 710.969 ՀՀ դրամ՝ բազային հարկի չափը՝ առանց տույժի, ինչը նույնպես ապացուցում է, որ հայտը ներկայացնելու օրը նշված պարտավորությունը ժամկետանց դեռևս չի եղել:

Հարգելի պարոն Սարգսյան, տեղեկացնում ենք, որ «Վիոլա» ՍՊԸ-ն 24.09.2018թ. փաստաբանական հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հաստատել «Վիոլա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00801026) մոտ 30.07.2018թ. 710.969 ՀՀ դրամ պարտավորության առկայությունը՝ ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով, ինչպես նաև հայտնել, արդյոք «Վիոլա» ՍՊԸ-ի մոտ ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով 30.07.2018թ. առկա 710.969 ՀՀ դրամ պարտավորությունը հանդիսանում է ժամկետանց, թե ոչ:

Ի լրումն 25.09.2018թ. ներկայացված դիրքորոշման, «Վիոլա» ՍՊԸ-ն 04.10.2018թ. ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ըստ «Վիոլա » ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 30.07.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ 716.368 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով:

Այնուհետև, վերոհիշյալ հարկի հետ կապված «Վիոլա» ՍՊԸ-ն 03.09.2018թ. և 24.09.2018թ. դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե մատնանշելով աշխատակիցների կողմից թույլ տված սխալը՝ հարկի հաշվարկման հետ կապված, որից հետո «Վիոլա» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարվել են փոփոխություններ, և արդեն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 18.09.2018թ. քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 30.07.2018թ. դրությամբ ունի ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով 710.969 ՀՀ դրամ պարտավորություններ (716.368 ՀՀ դրամ պարտավորության գումարից հանվել է 5399 ՀՀ դրամ՝ տույժը):

Ի պատասխան փաստաբանական հարցման ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության համապատասխան գրությամբ նույնպես հաստատվել է, որ ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով 710.969 ՀՀ դրամ պարտավորությունը առաջացել է «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 17.07.2018թ. ներկայացված ներմուծման հայտարարագրի հիման վրա առաջացած հարկային պարտավորության

արդյունքում, և նշված հայտարարագրի համար վճարման ժամկետ է հանդիսանում 20.08.2018թ.:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով 710.969 ՀՀ դրամ պարտավորությունը ժամկետանց չի, ուստի նշված փաստը, մեր կարծիքով, հիմք չի կարող հանդիսանալ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Վիոլա » ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16539-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 07.09.2018թ. թիվ 01/10-205 գրությունը, ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 23.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Վիոլա» ՍՊԸ-ի 27.09.2018թ. և 04.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումները, 30.07.2018թ. դրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «Վիոլա» ՍՊԸ-ին ուղղված 03.10.2018թ. գրությունը, 30.07.2018թ. դրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրված եզրակացությունը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության պարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/48 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 09.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 84-րդ, 31-րդ, 93-րդ և 100-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վիոլա» ՍՊԸ-ին:

- 5-րդ կետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Վիոլա» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 716.368 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 23.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով որոշել է մերժել «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.07.2018թ.) ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները 84-րդ, 93-րդ և 100-րդ չափաբաժինների մասով գերազանցում են ներկայացրած գնային առաջարկների մեկ տոկոսը:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 17.07.2018թ. էլեկտրոնային եղանակով հարկային տեսչությանն է ներկայացվել ներմուծման հայտարարագիր, որում ներմուծված ապրանքների համար հաշվարկվել է ԱԱՀ՝ 460.381 ՀՀ դրամի չափով, հաջորդ օրը՝ 18.07.2018թ., Ընկերության կողմից նշված գործարքի մասով նորից է ներկայացվել հայտարարագիր ուղղված տարբերակով, որտեղ ներմուծված ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարը ներկայացվել է 335.068 ՀՀ դրամ: Արդյունքում «Վիոլա» ՍՊԸ-ին վերագրվել է երկու հայտարարագրերով՝ թե հարկային հաշվարկով, և թե ճշտված հայտարարագրով ներկայացված գումարները, մինչդեռ ՀՀ հարկային օրենքգրի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ընկերության վրա պետք է դրվեր միայն ճշտված հայտարարագրով ներկայացված գումարի մասով պարտավորություն: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ վկայակոչված ներմուծման հայտարարագրերի հիման վրա առաջացած ներմուծման մասով ԱԱՀ-ի համար վճարման վերջնաժամկետ է հանդիսացել 20.08.2018թ.: Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ «Վիոլա» ՍՊԸ-ն 03.09.2018թ. դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային պարտավորություններում վերահաշվարկ կատարելու խնդրանքով, սակայն նշված վերահաշվարկը կատարվել է 03.09.2018թ., այլ ոչ թե Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարվել են ուղղումներ՝ ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով 716.368 ՀՀ դրամ պարտավորության գումարից հանվել է 5399 ՀՀ դրամ՝ տույժը, և պարտքը դարձել է 710.969 ՀՀ դրամ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 30.07.2018թ. դրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ առկա 710.969 ՀՀ դրամ պարտավորությունը ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գծով է:

«Վիոլա» ՍՊԸ-ն 24.09.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հաստատել «Վիոլա» ՍՊԸ-ի մոտ 30.07.2018թ. դրությամբ 710.969 ՀՀ դրամ պարտավորության առկայությունը՝ ներմուծման մասով

ԱԱՀ-ի գծով, ինչպես նաև հայտնել, արդյո՞ք առկա 710.969 ՀՀ դրամ պարտավորությունը հանդիսանում է ժամկետանց, թե՛ ոչ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն՝ ի պատասխան «Վիոլա» ՍՊԸ-ի 24.09.2018թ. գրության, 03.10.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 24.09.2018թ. դիմումի տեղեկացնում ենք, որ համաձայն հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի՝ միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են արտոնագրային հարկի, սոցիալական վճարի, նույն օրենսգրքի 416-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ հարկ վճարողի գործունեության կասեցման փոխարեն հաշվարկված տուգանքի, հարկային մարմնի արտաբյուջետային հաշվի հարկային պարտավորությունները՝ նշված հերթականությամբ, ընդ որում նշված հարկային պարտավորությունները մարվում են՝ անկախ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների առկայությունից և դրանց առաջացման ժամկետներից: Վերը նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջնահերթ մարվել է «Վիոլա» (ՀՎՀՀ 00801026) ՍՊ ընկերության կողմից 17.07.2018թ. ներկայացված ներմուծման հայտարարագրի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունն՝ անկախ այն հանգամանքից, որ նշված հայտարարագիրը ներկայացվել է 2018թ. հուլիս ամսվա ընթացքում կատարված ներմուծման համար, որի համար վճարման ժամկետ է հանդիսանում 20.08.2018թ.: Այնուհետև 20.07.2018թ. ներկայացված հունիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունը միասնական հաշվում գումարի բացակայության պատճառով՝ 30.07.2018թ. դրությամբ ամբողջությամբ չի մարվել և

գնումների գործակալության կողմից կատարված հարցմանն ի պատասխան տրվել է տեղեկանք՝ ներառելով այդ պարտավորությունը:»:

«Հարկային օրենսգրքի՝

- 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ներկայացված մեկից ավելի հարկային հաշվարկներից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հարկային հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հարկային հաշվարկ: Արտահանման կամ ներմուծման տվյալ գործառնության մասով ներկայացված մեկից ավելի ներմուծման հարկային հայտարարագրերից կամ արտահանման հարկային հայտարարագրերից առաջինը համարվում է տվյալ գործառնության համար ներկայացված հայտարարագիր, իսկ մյուսները՝ ճշտված հայտարարագիր:

- 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել միայն հետևյալ փաստաթղթերը.

1) ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը.

2) ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու)՝ մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ:

- 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող

ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհիրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության պարքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊԶԲ-18/48 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված

գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Վիոլա» ՍՊԸ-ի՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (30.07.2018թ.) դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 716.368 ՀՀ դրամ:

- 31.08.2018թ. Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվության համաձայն՝ 30.07.2018թ. դրությամբ առկա է

ընդամենը 716.368 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորություն, որից 710.969 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ի մասով վճարման ենթակա գումարն է, իսկ 5.399 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ի մասով հաշվարկված տույժի գումարն է:

- 18.09.2018թ. Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվության համաձայն՝ 30.07.2018թ. դրությամբ առկա է ընդամենը 710.969 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորություն, որը ներմուծման մասով վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարն է:

- «Վիոլա» ՍՊԸ-ի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 30.07.2018թ. դրությամբ առկա 710.969 ՀՀ դրամ պարտավորությունն առաջացել է ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով, որի վճարման վերջնաժամկետը եղել է 20.08.2018թ. ներառյալ:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 03.10.2018թ. գրության համաձայն առաջնահերթ մարվել է «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 17.07.2018թ. ներկայացված ներմուծման հայտարարագրի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունն՝ անկախ այն հանգամանքից, որ նշված հայտարարագիրը ներկայացվել է 2018թ. հուլիս ամսվա ընթացքում կատարված ներմուծման համար, որի համար վճարման ժամկետ է հանդիսանում 20.08.2018թ.:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ քանի որ արձանագրված 710.969 ՀՀ դրամ գումարի չափով ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետ է հանդիսանում 20.08.2018թ. ներառյալ, հետևաբար «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա պատրավորությունը չի կարող դիտարկվել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արձանագրված ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է ոչ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ պայմանավորված է ՀՀ հարկային մարմնի կողմից ներդրված միասնական հարկային հաշվի համակարգի աշխատանքի տեխնիկական առանձնահատկություններով: Ուստի, նշված

հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը չի կարող դիտարկվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը


Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16539-18 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ